

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. ՀՀ ՎՁ մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին ուղղվել են բազմաթիվ բանավոր հարցումներ, որոնց պատասխանվել է անմիջապես: Հարցերը վերաբերել են մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների գործունեությանը: Բանավոր հարցումներ են ստացվել նաև մարզպետարանում գործող թեժ գծով՝ +374 281 2 25 57 հեռախոսահամարով, որոնց նույնպես պատասխանվել է անմիջապես:

2020 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում գրանցվել է 48 գրավոր հարցում (լրագրողներից՝ 31, քաղաքացիներից՝ 7, ուսանողներից՝ 3, ՀՀ ԱԺ պատգամավորներից՝ 2, ՀԿ-ներից՝ 2, ՀՀ փաստաբանների պալատից՝ 2 և հիմնադրամներից՝ 1), որոնց պատասխանվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Անպատասխան մնացած հարցումներ չեն եղել:

2020 թ. մարզպետարան դիմած քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ ամփոփ-տեղեկանքը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքէջի <Քաղաքացիների ընդունելություն> բաժնի <Ընդունելության արդյունքները եռամսյակային և կիսամյակային կտրվածքով> ենթաբաժնում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏՀԿ բաժին